



*California's protection & advocacy system*

*Տեղեկագիր հաշմանդամություն  
ունեցող անձանց դեմ  
խտրականություն կիրառելու  
վերաբերյալ. Նահանգային և  
տեղական կառավարության  
աշխատակիցներ*

*Հունիս 2018թ., Հրապ. #F119.10 - Armenian*

**Նահանգային և տեղական կառավարության աշխատակիցներ**

Նահանգային և տեղական կառավարության աշխատակիցները հաշմանդամության հիմքով կիրառվող խտրականությունից պաշտպանվում են նահանգային և դաշնային օրենքներով: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին դաշնային օրենքի (անգլ.՝ Americans with Disabilities Act, ADA) գլուխ I-ն արգելում է աշխատանքային խտրականությունը հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի գլուխ II-ն արգելում է նահանգային և տեղական կառավարություններին կիրառել խտրականություն հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ: Հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնման մասին օրենքի բաժին 504-ը արգելում է նաև կիրառել խտրականություն այն պետական կառույցների դեմ, որոնք ստանում են դաշնային ֆինանսավորում:

Կալիֆորնիայի աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականությունն արգելող օրենքը (անգլ.՝ The California Fair Employment and Housing Act, FEHA) տրամադրում է նմանատիպ պաշտպանություն: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի կամ բաժին 504-ի ցանկացած խախտում համարվում է նաև նահանգային օրենսդրության խախտում: Սակայն որոշ հանգամանքներում նահանգային օրենսդրությունը կարող է ապահովել առավել մեծ պաշտպանություն, քան դաշնային օրենսդրությունը:

Խտրականություն է համարվում հաշմանդամություն ունեցող աշխատակիցների և աշխատանքի դիմորդների նկատմամբ ցուցաբերված անհավասար վերաբերմունքը, հակազդեցությունը և ճնշումը: Խտրականություն է համարվում նաև գործատուի գործելակերպում, քաղաքականություններում կամ աշխատանքային պայմաններում ողջամիտ ձևափոխություններ չկատարելը, որոնք անհրաժեշտ են աշխատակցի կամ աշխատանքի դիմորդի հաշմանդամությանը համապատասխան հարմարություններ ստեղծելու համար: Հարմարությունը կամ ձևափոխությունը համարվում են ողջամիտ առանձին իրավիճակից կամ աշխատանքի տեսակից կախված: Ողջամիտ հարմարություններն ու ձևափոխությունները չեն կարող չափից դուրս ծանրաբեռնել գործատուին (լինեն զգալի դժվար կամ ծախսատար): Ստորև ներկայացված են ողջամիտ հարմարություն պահանջող նամակի նմուշը և բուժող մասնագետի կողմից ներկայացվող աջակցության նամակի նմուշը:

Ստորև ներկայացված են որոշ ռեսուրսներ հաշմանդամության խտրականության և աշխատանքում ողջամիտ հարմարությունների ստեղծման վերաբերյալ ավելին իմանալու համար.

- ԱՄՆ Հավասար հնարավորությունների ապահովման հանձաժողովի (անգլ.՝ U.S. Equal Opportunity Commission, EEOC) կայքէջ. <http://www.eeoc.gov/laws/types/disability.cfm>
- Կալիֆորնիայի աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականության արգելման վարչության կայքէջ. <http://www.dfeh.ca.gov/Employment>
- Աշխատանքային հարմարությունների ցանցի կայքէջ՝ աշխատավայրում ողջամիտ հարմարությունների ստեղծման մասին տեղեկատվության համար. <http://askjan.org>
- Աշխատավայրում անվճար իրավական խորհրդատվության կայքէջ՝ ռեսուրսներ գտնելու և իրավական ներկայացուցիչ ունենալու համար. <https://legalaidatwork.org/>

## **Ինքնապաշտպանություն**

Եթե կարծում եք, որ ձեր նկատմամբ կիրառվել է խտրականություն, կարող եք դիմել ձեր գործակալությունում աշխատող Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի համակարգողին կամ EEO գրասենյակին կամ ներկայացնել վարչական բողոք նահանգային կամ դաշնային մակարդակով:

Յուրաքանչյուր նահանգային գործակալություն պետք է ունենա Հավասար աշխատանքային հնարավորությունների ապահովման գրասենյակ (անգլ.՝ Equal Employment Opportunity Office, EEO): EEO-ն պատասխանատու է խտրականության թեմայով ներկայացվող բոլոր բողոքներին կամ տվյալ գործակալությունում ողջամիտ հարմարություններ ստեղծելու համար ներկայացված բոլոր դիմումներին ընթացք տալու համար: Ձեր գործակալության Հավասար աշխատանքային հնարավորությունների ապահովման հարցերով զբաղվող աշխատակցի կոնտակտային տվյալները գտնելու համար այցելեք.

<http://www.calhr.ca.gov/state-hr-professionals/Pages/ocr-description.aspx>

50 և ավելի աշխատակից ունեցող տեղական գործակալությունները պետք է ունենան առնվազն մեկ աշխատակից, ով կհամակարգի Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի կիրառումը: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի կիրառման համակարգողն աշխատում է պետական գործակալության հետ համատեղ՝ վարչություններին հաշմանդամություն ունեցող աշխատակիցների իրավունքների մասին կրթելու, ինչպես նաև Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի և նահանգային օրենսդրության պահանջների չկատարման հետ կապված բողոքների ուսումնասիրություն կատարելու համար: Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի ձեր տեղական համակարգողի կոնտակտային տվյալները կարող եք գտնել քաղաքի կամ վարչաշրջանի կայքէջում:

Դուք կարող եք ներկայացնել նաև վարչական բողոք Կալիֆորնիայի աշխատանքի տեղավորման և կացարանով ապահովման հարցերում խտրականության արգելման վարչությանը (անգլ.՝ Department of Fair Employment and Housing, DFEH) կամ ԱՄՆ Արդարադատության վարչությանը:

Բողոքները DFEH-ին կարելի է ներկայացնել խտրականության դեպքից հետո մեկ տարվա ընթացքում: DFEH-ի կայքէջը պարունակում է տեղեկատվություն խտրականության վերաբերյալ բողոք ներկայացնելու և բողոքի ընթացքին հետևելու մասին. <https://www.dfeh.ca.gov/filing-a-complaint-online/>.

Նախքան նահանգային դատարանին հաշմանդամության հիմքով խտրականություն կիրառելու համար դատական հայց ներկայացնելը դուք պետք է ներկայացնեք վարչական բողոք և DFEH-ից ստանաք «հայց ներկայացնելու իրավունք»:

EEOC-ի հետ կնքած պարտականությունների բաշխման համաձայնագրի համաձայն ԱՄՆ Արդարադատության վարչությունը (անգլ.՝ Department of Justice, DOJ) այն դաշնային գործակալությունն է, որն առաջնահերթորեն պատասխանատու է գլուխ II-ով սահմանվող շատ աշխատակիցների նկատմամբ կիրառված աշխատանքային խտրականության բողոքների ուսումնասիրման համար: Դաշնային ֆինանսավորում ստացող պետական կառույցների աշխատակիցները

բաժին 504-ի համաձայն խտրականության բողոքները պետք է ներկայացնեն ֆինանսավորումն ստացող դաշնային գործակալությանը: Բողոքները պետք է ներկայացվեն Արդարադատության վարչությանը կամ համապատասխան դաշնային գործակալությանը խտրականության դեպքից հետո 180 օրվա ընթացքում:

Արդարադատության նախարարությանը Հաշմանդամություն ունեցող ամերիկացիների մասին օրենքի (ADA) համաձայն բողոք ներկայացնելու համար օգտագործե՛ք բողոքի առցանց ձևը, որը կարելի է գտնել վարչության ADA-ի կայքէջում, հետևյալ հղումով՝ [www.ada.gov](http://www.ada.gov).

Բողոքները կարելի է ուղակել նաև փոստով Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների հարցերով զբաղվող բաժնին, հետևյալ հասցեով՝

U.S. Department of Justice  
950 Pennsylvania Avenue, N.W.  
Civil Rights Division  
Disability Rights Section  
Washington, D.C. 20530

Դատարանները սահմանել են, որ ի տարբերություն ADA օրենքի գլուխ I-ով մասնավոր գործատուների դեմ ներկայացված հայցերի, գլուխ II-ի կամ բաժին 504-ի համաձայն դատարանին հայց ներկայացնելու համար կարիք չկա Արդարադատության վարչությունից նախապես ստանալ հայց ներկայացնելու իրավունք: Այդ դատարանները սահմանել են, որ գլուխ II-ի և բաժին 504-ի համաձայն աշխատանքային խտրականության դեպքերի բողոքների համար գործում են գլուխ I-ի իրավական չափանիշները, բայց ոչ գլուխ I-ի դատաքննչական պահանջները: Բաժին 504-ի կամ գլուխ II-ի համաձայն ներկայացվող հայցերը պետք է ներկայացվեն խտրականության դեպքից հետո մեկ տարվա ընթացքում:

## **Դատական հետաքննություն**

Վերևում նշված օրենքների խախտումները կարող են քննվել նաև մասնավոր դատական հայցերի միջոցով: Խնդրում ենք տեղյակ լինել, որ գործում են վաղեմության ժամկետներ, որոնք սահմանափակում են դատական քննության համար հայցի ներկայացման ժամկետները, և դուք հավանական է կորցնեք հայց ներկայացնելու հնարավորությունը, եթե չդիմեք այդ վաղեմության ժամկետների ընթացքում: Դատական

Իմունիտետը նույնպես կարող է սահմանափակել պետական կառույցների կողմից տրվող արտոնությունները: Եթե հետաքրքրված եք դատական հետաքննությամբ, դուք պետք է հնարավորինս շուտ խորհրդակցեք փաստաբանի հետ:

## Ողջամիտ հարմարություն պահանջելու դիմումի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [Գործատու],

Ես գրում եմ Ձեզ իմ հաշմանդամության/հաշմանդամությունների համար ողջամիտ հարմարություն(ներ) տրամադրելու խնդրանքով: Ես [պետական հիմնարկի անվանում] [աշխատակիցն եմ/դիմում եմ պաշտոնի համար]: Իմ հաշմանդամության համար ինձ անհրաժեշտ են հետևյալ հարմարությունները. [հարմարությունների թվարկում]: Իմ [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/մասնագիտական հիվանդությունների բժիշկը/այլ անձ (նկարագրել)] այս հարմարությունները/ձևափոխությունները համարել է անհրաժեշտ իմ հաշմանդամության համար: Կից ներկայացնում եմ [բժշկի կամ մասնագետի անունը]-ի նամակը:

Դաշնային և նահանգային օրենքով պահանջվում է, որ գործատուները հաշմանդամություն ունեցող աշխատակիցների և դիմորդների համար ստեղծեն հարմարություններ: Խնդրում եմ պատասխանել այս դիմումին մինչև [ամսաթիվ]-ը: Հարցեր ունենալու դեպքում ինձ հետ կարող եք կապվել [նշեք ձեր հեռախոսահամարը և/կամ էլ. փոստի հասցեն]: Շնորհակալություն:

Հարգանքով,

[ձեր անունը]

[ձեր հասցեն]

## Աջակցող նամակի նմուշ

[Ամսաթիվ]

Հարգելի [պետական հիմնարկի անվանում],

Ես հանդիսանում եմ [անուն, ազգանուն]-ի [բժիշկը/հոգեբույժը/հոգեբանը/թերապևտը/սոցիալական աշխատողը/մասնագիտական հիվանդությունների բժիշկը] և ծանոթ եմ նրա առողջական վիճակին: [Նա] ունի այնպիսի հաշմանդամություն, որը պատճառում է որոշակի ֆունկցիոնալ սահմանափակումներ: Այդ սահմանափակումներն են՝ [թվարկել դիմումի մեջ նշված հարմարությունը պահանջող ֆունկցիոնալ սահմանափակումները]:

[Պահանջվող հարմարությունն] անհրաժեշտ է [անուն, ազգանուն]-ի համար, որպեսզի նա [գործատու]-ի մոտ [աշխատի/դիմի աշխատատեղի համար]: [Նկարագրել, թե հարմարությունն ինչպես է օգնելու կամ օժանդակելու տվյալ անձին]:

Շնորհակալություն [անուն, ազգանուն]-ի համար այս ողջամիտ հարմարությունն ապահովելու համար:

Հարգանքով՝

[անուն, ազգանուն և պաշտոն]



---

Մենք ուզում ենք լսել ձեր կարծիքը: Խնդրում ենք պատասխանել մեր հրապարակումների մասին հետևյալ հարցման հարցերին և տեղեկացնել մեզ, թե ինչպես ենք մենք աշխատում: [\[Անցնել հարցումը\]](#)

Իրավաբանական օգնություն ստանալու համար զանգահարել 800-776-5746 հեռախոսահամարով կամ լրացնել [օգնության դիմումի ձևը](#): Մյուս բոլոր հարցերով զանգահարել 916-504-5800 (Հյուսիսային Կալիֆորնիա), 213-213-8000 (Հարավային Կալիֆորնիա) հեռախոսահամարներով:

*Կալիֆորնիայի հաշմանդամների իրավունքների պաշտպանության կազմակերպությունը ֆինանսավորվում է տարբեր աղբյուրներից, հովանավորների ամբողջական ցանկը տե՛ս հետևյալ հղումով՝*

[http://www.disabilityrightsca.org/  
Documents/ListofGrantsAndContracts.html](http://www.disabilityrightsca.org/Documents/ListofGrantsAndContracts.html):